

Կալայ գծով կը հասնի նոյն տարւոյն Սեպտեմբեր 10ին Կ. Պոլիս :

Հոն կ'իմանայ թէ դէպի Աղեքսանդրիա-Երուսաղէմ նաւոյ ուխտաւորներու խումբը մեկնած է արդէն. իսկ ցամաքի ճանապարհը շատ վտանգաւոր է : Ճարահատած կը հարկադրուի Սիմէոն ֆնալ Կ. Պոլիս : Գրիգոր պատրիարք Կեսարացի կը պատսպարէ զինքը վեց ամիս (Ուղ. 8) :

Գրիգոր Կեսարացւոյ քով կը ծանօթանայ Սիմէոն Մովսէս Տաթեւացւոյ, որ յետոյ կաթողիկոս ընտրուեցաւ, եւ Աղարիա Սասնեցւոյ հետ : Վերջնոյս խնդրանքով կ'օրինակէ 1609 Օգոստոս 28ին Մխիթար Գօշի Դատաստանադիրքն եւ Կանոնադիրքը. կը գրէ յիշատակարանին մէջ⁴ :

«Եւ արդ ես յետինս եւ անարժանս ի մանկունս եկեղեցոյ թափառնիկս եւ յունայնս ի գործոց բարեաց, մեղապարտ Սիմէոն դպիրս... շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ գիրքս որ կոչի Կանոնք... Բայց կատարեցաւ սա ի մեծ թվիս Հայոց ՌԾՂերբորդի եւ ի յամսեանն Օգոստոսի ԻԸ., ի հայրապետութեան Տէր Մէլքիսէթի եւ ի բռնակալութեան սուրբան Ահմատին, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդոյն նորա Մարտիրոսի, ի

⁴ Համամճեան՝ Յուցակ հայերէն ձեռագրաց Գաղատայ, թ. 11 (անախդ) : Տես վարը, էջ 387—391 :